

131.99-5

9-31

ՄԱՄԻԿՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Տ Ա Ր Ր Ա Կ Ա Ն
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Յ Ե Վ
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

I ՅԵՎ II ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1936

491.99-5
Գ-31

431-33-5

9-43

Հաստատված է
ՀՍԽՀ Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի կողմից



ՄԱՄԻԿՈՆ ԳՍՍՊԱՐՅԱՆ

225

ՏԱՐՐԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

I. ՅԵՎ II ԴՍՍՊԱՐՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՈՃԱՔԳԱՆ ԶԵՆՆԱՐԿ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍՍՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ



1022

37

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս ձեռնարկով (ինչպես և III ու IV դասարանների աշակերտների համար գրված տարրական քերականության և ուղղագրության դասագրքերով) դասավանդելու համար մանրամասն մեթոդական ցուցումներ և անհրաժեշտ բացատրություններ տրվում են նույն հեղինակի «Մեթոդական ցուցումներ» Տարրական քերականության և ուղղագրության «ձեռնարկով ու դասագրքերով դասավանդելու վերաբերյալ» գրքուկում *), վորը մենք հանձնարարում ենք կարգալի: Այդ գրքուկում տրվում են բացատրություններ տարրական քերականության գրվածքի, ուղղագրական ուղղությունների ամրացման համար կաղմակերպվող սխեմատիկ պարբերական կրկնությունների և թեմաների մշակման մասին, գրքուկում կան բնորոշ դասերի համար առանձին ցուցումներ, որինակելի դասերի մշակումներ և այլն:

Անհրաժեշտ ենք համարում նշել, վոր քերականության և ուղղագրության ծրագրային նյութը մշակելու համար պետք է հատկացնել հատուկ ժամանակ հետեվյալ ձևով:

I ԴՍՍԱՐԱՆՈՒՄ

I դասարանում քերականական նախնական գիտելիքներ հաղորդելը և ուղղագրական պարզագույն վարժություններ կատարելը պետք է սկսել Բ կիսամյակից, այսինքն չերրորդ քառորդից: Այդ աշխատանքներին պետք է հատկացնել ընդամենը 44 ժամ, վորից 24 ժամ՝ III քառորդում և 20 ժամ՝ IV քառորդում, ուրիշ խոսքով վեցորդակում պետք է տալ 2 դաս:

*) Պատրաստվում է տպագրության համար և ջուտով լույս կտեսնի:

Գ քառորդում պետք է անցնել I, II և III թեմաները, իսկ Դ քառորդում՝ IV, V և VI թեմաները հետեւյալ կերպ.

I թեման	7 դասում
II »	11 »
III »	6 »
IV »	7 »
V »	7 »
VI »	6 »

Բոլոր №№-ի աշխատանքներին պետք է տալ մեկական դաս, բացի 1, 2, 4, 5 և 8-ից: № 8 աշխատանքը պետք է անցնել 2 դասում, իսկ №№ 1 և 2, ինչպես և 4 և 5 աշխատանքները, մեկական դասում: III թեմայում տրված է ընդամենը 4 աշխատանք, պետք է նման 2 աշխատանք ուսուցիչն ինքը կազմի:

II ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Քերականությանը և ուղղագրությանը II դասարանում հատկացվում է 126 ժամ, վոր ըստ քառորդների բաշխվում է հետեւյալ կերպ.

I քառորդում	30 ժամ
II »	30 »
III »	36 »
IV »	30 »

Ընդամենը 126 ժամ

Քաղաքի դպրոցներում վեցորյակում տրվում է 3 ժամ, վորը պետք է բաժանել 5 աշխատանքի որերի մեջ հետեւյալ կերպ.

1 անգամ	1 լրիվ դաս = 1 ժամ
4 »	$1\frac{1}{2}$ -ական դաս = 2 ժամ

Ընդ. 3 ժամ

Դյուղի դպրոցներում յոթնորյակում տրվում է $3\frac{1}{2}$ ժամ, վորը պետք է բաժանել 6 աշխատանքի որերի մեջ հետեւյալ կերպ.

1 անգամ	1 լրիվ դաս = 1 ժամ
5 անգամ	$1\frac{1}{2}$ -ական դաս = $2\frac{1}{2}$ ժամ

Ընդ. $3\frac{1}{2}$ ժամ

Ա քառորդում պետք է անցնել I—V, Բ քառորդում՝ VI—VIII, Գ քառորդում՝ IX և Դ քառորդում՝ X թեմաները:

Ամեն մի աշխատանք պետք է անցնել մի դասում. յեթի աշ-

խատանքը չերկար է, նոր թեմա յե սկսվում կամ թեման ամփոփվում ե՝ պետք է մի ամբողջ ժամ հատկացնել, իսկ մյուսներին միջին հաշվով $1\frac{1}{2}$ -ական դաս, ինչպես սովեց վերելում:

II և III քառորդների աշխատանքները բավարար չափով են տըրված. քիչ են I և IV քառորդների աշխատանքները, վորովհետեւ I քառորդում պետք է առնվազն 10 դաս հատկացնել I դասարանում անցածի կրկնությանը, իսկ IV քառորդում մի ամբողջ ամիս II դասարանում անցածի կրկնությանը, ամփոփմանը և լրացմանը, վորի համար կարելի յե ոգտագործել III դասարանի քերականության և ուղղագրության դասադրքի I թեմայի 26 աշխատանքները:

ՀԵՂԻՆԱԿ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

I. ՎԵՐՋԱԿԵՏԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՈՒՄ

1. Կարգացե՛ք՝ ինչ վոր ասված է տղայի մասին:
Կարգացե՛ք՝ ինչ վոր ասված է աղջկա մասին:

Տղան կարգում է:

Աղջիկը գրում է:

2. Արտագրեցե՛ք Հայկի մասին ասվածը:

Աշխենը խաղում է:

Հայկը վազում է:

Արամը ցատկում է:

3. Արտագրեցե՛ք Թռչուններ մասին ասվածները:

Հավը կշկշում է:

Կովը բառաչում է:

Ագռավը կռավում է:

Կատուն մլավում է:

Ծիտը ծլվլում է:

Գայլը վռռում է:

Այս ձեվով շան մասին մի միտք՝ մի նախադասություն
հայտնեցե՛ք:

Որինակ՝ Շունը հաջում է: Շունը վազում է: Շունը միտ
է ուտում:

4. Արտագրեցե՛ք աշակերտին վերաբերող նախադասությունը:

Աշակերտուհին կարդաց:

Աշակերտը պատմեց:

5. Քանի՞ նախադասութիւնից ե կազմված այս վոտանավորը: Արտագրեցէք արեւին վերաբերող նախադասութիւնը:

ԱՄԱՌ

Արեւը ալրում ե:
Խոտը չորանում ե:
Ցորենը հասնում ե:
Հասկերը լցվում են:

6. Կարդացէք և ամեն մի նախադասութեան վերջում դադար արեք:
Արտագրեցէք և վերջակետից հետո մեծատառի տակ գիծ քաշեցէք:
Քանի՞ նախադասութիւն կա այս պատմվածքում:

ԳԱՐՆԱՆ ԳԱՂԸ

Որերը տաքանում են: Թռչունները վերադառնում են:
Դաշտերը կանաչում են: Բաղերը լողում են գետակում:
Ծտերն ուրախ ծլվում են:

Նախադասութեան վերջում վերջակետ ենք դնում:
Վերջակետից հետո առաջին բառը սկսում ենք մեծատառով:

7. Կարդացէք և ամեն մի նախադասութիւնից հետո դադար արեք:
Արտագրեցէք և ամեն մի նախադասութիւնից հետո յերկու գծիկների տեղը վերջակետ գրեք:
Քանի՞ նախադասութիւն կա այս պատմվածքում:

ՈՎ ԻՆՉ Ե ԱՆՈՒՄ

Ուսուցիչը սովորեցնում ե || Աշակերտները սովորում են || Ատամնաբույժը ատամներն ե բուժում || Սպասավորը սենյակն ե մաքրում ||

8. Այստեղ յերկու պատմվածք կա. մեկը Աննայի մասին ե, իսկ մյուսը կատվի մասին ե:

Հրածինը շփոթվել ե և նախադասութիւնները խառը կարգով ե արտագրել:

Դուք այս նախադասութիւններն այնպես արտագրեցէք, վոր յերկու կանոնաւոր պատմվածքներ ստացվեն՝ մեկը Աննայի մասին, իսկ յերկրորդը կատվի մասին:

ԱՆՆԱՆ

ԻՄ ԿԱՏՈՒՆ

Աննան հիվանդացավ:	Յես ունեմ մի կատու:
Նա միշտ մուկ ե բռնում:	Բժիշկը չեկավ:
Նա շատ ե մլավում:	Մեր կատուն մոխրագուշն ե:
Նա դեղ գրեց:	Շուտով Աննան առողջացավ:

II. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԲԱՌԵՐԻ

9. Այստեղ ամեն մի նախադասութեան մեջ մի բառը չի գրված, և նրա տեղը գրված ե գծիկ:

Կարդացէք նախադասութիւնները՝ բաց թողած բառերն ավելացընելով:

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈԳՈՒՏԸ

_____ կաթ ե տալիս:
_____ մուկ ե բռնում:
_____ բուրդ ե տալիս:

(կովը, կասուն, վոջխարը)

Նախադասութիւնը կազմվում ե բառերից:

10. Կարդացէք և գծիկների տեղը ավելացրէք պտուղների անունները:

Արտագրեցէք և գծիկների տեղը գրեցէք բաց թողած բառերը:

ՊՏՈՒՂՆԵՐ

Տանձը դեղին ե: _____ կարմիր ե: _____ սեւ ե:
(խնձորը, խաղողը)

11. Կարգացե՞ք և գծիկները տեղը ավելացրե՞ք կենդանիների ձագերի անունները:
Արտագրեցե՞ք.

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՁԱԳԵՐԸ

Քոթոթն արջի ձագն է: — վոչխարի ձագն է: —
ձիու ձագն է:

(գառը, բուռակը)

12. Այնպես լրացրե՞ք նախադասությունը, վոր բառերն իրար հետ կանոնավոր կապակցվեն:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԿՆԵՐԸ

Հոկտեմբերիկները առաջավոր աշակերտներ են:
— որինակ են վերջնում միուս աշակերտները:

13. Արտագրեցե՞ք առանց հարցերի և գծիկների տեղը դրե՞ք բաց բոլորած բառերը:

ԿԱԹՍԱ ՅԵՎ ՏԱՊԱԿ

Կերակուրը լեփում ենք — (ի՞նչի մեջ):

Կերակուրը տապակում ենք — (ի՞նչի մեջ):

14. Արտագրեցե՞ք նախադասությունները՝ ավելացնելով բաց բոլորած բառերը:

ԸՆՏԱՆԻ ՅԵՎ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Եղն ընտանի կենդանի լե: Առյուծը վայրենի կենդանի լե: Յեղը : Գալը :

(ընտանի կենդանի լե, վայրի կենդանի լե)

15. Արտագրեցե՞ք՝ ավելացնելով բաց բոլորած բառերը:

Ո՛Վ ԻՆՉՊԵՍ Ե ՇԱՐԺՎՈՒՄ

Մարդը քայլում է: Ձուկը.... : Ծիծեռնակը.... : Ոձը.... :
Գորար.... : Նապաստակը.... :

(վագում է, լողում է, ցատկում է, սողում է, թռչում է,

16. Լրացրե՞ք նախադասությունները և արտագրեցե՞ք:

Ո՛Վ ԻՆՉՈ՛Վ Ե ԾԱԾԿՎԱԾ

Վոչխարը ծածկված է բրդով: Հավը.... : Ճուռը.... :
Ձուկը.... : Ձին.... :

(վեժուկներով, մագով, աղվամագով, քեփուկներով)

17. Լրացրե՞ք նախադասությունները և արտագրեցե՞ք:

ԲՈՒՅՍԵՐ

Ցորենը հացահատիկ է: Մանուշակը.... :

Խնձորենին.... : Համեմը.... :

(կանաչեղեն, ծառ, ծաղիկ)

18. Լրացրե՞ք նախադասությունները և արտագրեցե՞ք:

ՎՈՐ ԳՈՐԾ ԻՔՈՎ ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ

Տախտակը սղոցում են: Խոտը հավաքում են.... :
Ատամները մաքրում են.... :

(փոցխով, խոզանակով)

19. Կարդացե՞ք և փակագծերի միջի տառերի ձեւերն այնպես փոփոխեցե՞ք, վոր նախադասություններ ստացվեն:

Գ Ե Ր Ա Չ Ա Ն Յ Ի Կ Գ Ե Ղ Ա Մ Ը

Գեղամը դարոց է գալիս դասերը պատրաստած, մաքուր (կոշիկներ) և (քաշկիմակ):

Նա բոլոր (առաքյալները) ստանում է գերազանց գնահատականներ:

III. ՄԵԾԱՏԱՌԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՄ

20. Արտագրեցե՞ք մարդկանց անունները:

ԼԵՆԻՆԻ ՅԵՂԱՅՐԱՆԵՐԸ ՅԵՎ ՔՈՒՅՐԵՐԸ

Լենինի անունը վաղիմիւր է: Վաղիմիւրը ունեւ լերկու լեղբայր՝ Ալեքսանդր ու Դիմիտրի և լերեք քուր՝ Ուզա, Աննա, Մարիա:

Գրելիս մարդկանց անուններն սկսում ենք մեծատառով:

21. Արտագրեցեք տղաների անունները:
Լեվոն, Հրաժին, Զարիկ, Հայկ, Հասմիկ, Սուրբիկ, Գաղիկ,
Ասողիկ, Արփիկ

22. Արտագրեցեք մարդկանց ազգանունները:

ՄԵՐ ԴԱՍԱՐԱՆԻ ԳԵՐԱԶԱՆՑԻԿՆԵՐԸ

Մեր դասարանի գերազանցիկներն են Լեվոնյանը, Աղա-
սյանը, Աբովյանը, Գրիգորյանը, Արամյանը, Ավագյանը:

23. Արտագրեցեք միայն հարցերը և պատասխանների տեղը
գրեցեք ձեր անունը և ազգանունը:

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Անուն.— Աղասի

Ազգանուն.— Ղուկասյան

Վեր դասարանում ես.— Առաջին դասարանում

IV. ԲԱՌԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՎԱՆԿԵՐԻ

24. Այս վոտանավորի բառերը մաս-մաս՝ վանկ—վանկ կար-
դացե՞ք:

Շ Ո Փ Ե Ք Ա Ր Շ

Բե—րում եմ, բե—րում եմ, բե—րում եմ

տբակ—եռր—ներ ու շար—քա—ցան—ներ,

տե—սակ, տե—սակ մե—քե—նա—ներ:

Բառն ունենում եմ մեկ կամ մեկից ավելի վանկեր:

Ուրիշակ՝ ջուր բառը ունի մեկ վանկ, քաղաք բառն ունի
չերկու վանկ, տրակտորներ բառն ունի չերեք վանկ, մեքենաներ
բառն ունի չորս վանկ:

25. Արտագրեցեք վոտանավորը բառերը վանկերի բաժանած:

ՄԻՐՈՒՆ ԳԱՐՈՒՆ

Ա.—բի, գա—րոն,

ա.—բի, սի—րոն,

ա—բի ու բեր

կա—նաչ դաշ—տեր:

26. Այս վանկերն իրար հետ միացրե՞ք և բառեր կազմեցե՞ք:
Գրեցե՞ք ձեր ստացած բառերն առանց վանկերի բաժանելու:

ա — մառ
— շուն
— նուշ

կա —
Մա —
Սա —

րո

27. Գծիկների տեղը դրե՞ք բաց բոլոր վանկերը և գրեցե՞ք:

Վ Ա Ն Կ Ա Խ Ա Ղ

— ախտ

մե —

— ախն

մո —

— պատակ

պահա —

— ծեռակ

մահճա —

(մաշիս, ուտիս, նապասակ, ծիծեռնակ, մեղու, մոծակ,
պահարան, մահճակալ)

28. Արտագրեցե՞ք անուններն այս կարգով՝

Մեկ վանկ ունեցող անուններ՝ :

Յերկու վանկ ունեցող անուններ՝ :

Յերեք վանկ ունեցող անուններ՝ :

Արամ, Խորեն, Կարո, Ասողիկ, Սոս, Աղասի, Ղուկաս,
Մամիկոն, Հեղինե

29. Արտագրեցե՞ք և բառերը գծիկներով վանկերի բաժանեցե՞ք:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Ձու լե ածում՝ հավ չի. խոտ ե ուտում՝ կով չի:

Ո՞վ ե խոտն ուտում լերեք ատամով:

30. Արտագրեցե՞ք և գծիկներով ցույց տվե՞ք՝ ինչպես կարելի
յի բառերը տղադարձ անել:

ԲԱՌԵՐԸ ՏՈՂԱԴԱՐՁԻ ՀԱՄԱՐ

պատուհան, ցանկապատ, աքաղաղ, կատու, վերարկու,
ներկարար, մեքենա, թաշկինակ, դասարան, թեթեռնիկ, գոր-
ծարան

Որինակ՝ պա—տուհան, պատու—հան:

V. ՎԱՆԿԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՀՆՁՅՈՒՆՆԵՐԻ

31. Կարգացեք վանկերի բաժանած և լերկարացրեք վերջին վանկերի պարզ ձայները՝ հնչյուններ:

Կիմ—մա՛, Մո—սի՛, ծուղ—բու—ղո՛ւ

32. Արտագրեցեք միայն առաջին վանկերը: Քանի՞ հնչյունից են կազմված այդ վանկերը: Իսկ քանի՞ հնչյունից են կազմված մյուս վանկերը:

Ա.—բա—գած	Ա.—բուս
Ե—մին	Ե—գուց
ո—բա—պահ	ո—ղակ

ու—սու—ցիչ	ու—սում
ի—ջե—վան	ի—բի—կուն

Վաճկն ունենում ե մեկ կամ մեկից ավելի հնչյուններ:
Որինակ՝ Ա.—բա—գած բառի մեջ առաջին վանկն ունի մեկ հնչյուն (ա), լերկորդ վանկն ունի լերկու հնչյուն (բա), իսկ լերկորդ վանկն ունի լերեք հնչյուն (գած):

33. Գտեք ինչ հնչյուններ են բաց թողած այս բառերում:

գա—ուն	մա—խո	տետ—ակ
ոե—ին	սե—ան	բա—ոն

34. Արտասանելով դա՛ն հնչյունները, վորոնք կան ամեն մի առդի բա՛ռը բառերում:

1. դա՛ս, բա՛ս, վա՛նկ, տա՛ս
2. նո՛ւս, ծի՛րան, դա՛սարան, սե՛ղան, տա՛նձ, խնձո՛ր
3. սա՛ք, սա՛լո՛ւ, վա՛րդ, պի՛ոնեք, գորժա՛քան

35. Արտասանելով վորոշեցե՛ք հնչյունների թիվը այս բառերի մեջ:

ԱՂՈՒՆԱԿ ՈՒ ԿԱԶԱՂԱԿ

Ղո՛ւ—ղո՛ւ—ղո՛ւ, ա՛—ղո՛ւ—ղո՛ւ,
նա՛կ—նա՛կ—նա՛կ, ա—ղո՛ւ—նա՛կ,
Չա՛—չա՛—չա՛, կա՛—չա՛—չա՛,
ղա՛կ—ղա՛կ—ղա՛կ, կա—չա—ղա՛կ:

36. Կարգացե՛ք առանձին տառերը և նախադասությունը հակառակ ուղղությամբ՝ աջից ձախ:

շի՛շ	քաղաք
տա՛տ	պարապ
Տաճատ, ասա՛	Տաճատ:

Ինքներդ ասացե՛ք նման բառեր:

37. Գրեցե՛ք միայն մարդկանց հանած ձայները:

ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՆԱԾ ԶԱՅՆԵՐԸ

Ը,—լաց ե լինում լերեխան:
—Ո՛, բարեվ, վճարեղ ելիր:
—Ե՛, շատ ես խոսում:
—Ո՛ւ, ձեռքերս սառան:
—Ա՛, ինչ սիրո՞ւն ե:
—Ի՛, մայրիկ, ասա՛ Աշոտը խեղճ մնա:

VI. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

38. Լրացրե՛ք նախադասությունները և արտագրեցե՛ք:

ԳԼԽԱԲԱՅ, ԲՈՒԲԻԿ, ՇԱՊԿԱՆՑ ՅԵՎ ՄԵՐԿ

Տղան հանեց գլխարկը և մնաց. . . .
Հանեց կոշիկն ու գուլպան ու մնաց. . . .
Հանեց վերին հագուստները և մնաց. . . .
Վերջն ել հանեց շապիկն ու վարտիքը և մնաց. . . .
Նետվեց գետը և լողացավ:

39. Արտագրեցե՛ք միայն պտուղների անունները վանկերի բաժա՛նելով:

ԱՇՆԱՆ ՆՎԵՐԸ

Թե աշուն ե պտղաբեր,
ինչ ե բերում մեզ նվեր.
—Նուռ, սերկեվիլ, տանձ, սալոր,
դեղձ ու խաղող մեղրածոր:

40. Լրացրէք և արտագրեցէք:

ԻՆՉԸ ԻՆՉԻ՝ ՊԵՍ

Կաթը սպիտակ է ձյան պես: Կակաչը կարմիր է. . . . :
Ազոավը սեւ է. . . . : Յորենը դեղին է. . . . :
(աւյան պես, ածուխի պես, վոսկու պես)

41. Լրացրէք և արտագրեցէք:

ԻՆՉԸ ԻՆՉԻ՝ ՆՄԱՆ

Եղը համառ է ուղտի նման: Պետրոսը աշխատասեր է. . . . :
Աշոտն իր դասընկերոջ ասածը կրկնում է. . . . : Մեր հերոս
ողաչուները համարձարկ են. . . . :
(մեղվի նման, բուքակի նման, արծվի նման)

42. Արտագրեցէք և ալ, յու, յո, յե յերկհնչյունների տակ գլծ
քաշեցէք:

ՄԵՐ ԱՆՑԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Առաջին դասարանում մենք անցնում ենք հայոց լեզու,
թվաբանություն, նկարչություն, լերգեցողություն և այլ
տուարկաներ:

43. Արտագրեցէք վերնագիրը և ամեն մի հարցին պատասխա-
նեցէք մի նախադասությամբ:

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ ԱՆԱՀԻՏԸ

Անահիտը լէրբ է վեր կենում: Նա ամեն առավոտ ուր է
գնում: Նա ինչո՞վ է գրում: Նա ի՞նչ է կարդում: Նա ինչո՞վ
է նկարում: Նա դասը ո՞ւմ է պատասխանում:

Որինակ՝ Անահիտը վաղ է վեր կենում:

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

I. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

1. Արտագրեցեք:

Նապաստակը փախչում է:

Շունը վագում է:

Աւամը գոռում է:

Այստեղ յերեք միտք կա:

Ամեն մի միտքը մի նախադասությամբ է:

Առաջին նախադասության մեջ ասված է նապաստակի մասին. յերկրորդ նախադասության մեջ՝ շան մասին, յերրորդ նախադասության մեջ՝ Արամի մասին:

2. Կարդացեք այս նախադասությունները:

Ծառերի տերեւները դեղնում են: Ձյուն է գալիս փաթիլ-փաթիլ: Թռչունները չվում են տաք լերկիրներ: Աշակերտները ձնե մարդ են շինում: Բարակ անձրեւ է մաղում: Արտագրեցեք միայն առնամը վերաբերող նախադասությունները:

3. Բարձրաձայն կարդացեք այս նախադասությունները:

Արտագրեցեք:

Աշակերտները գնում են:

Աշակերտները գնում են դպրոց:

Աշակերտները գնում են դպրոց սովորելու:

Նախադասության վերջում դադար է լինում: Գրելիս այդ դադարի տեղը գնում ենք վերջակետ:

4. Կարգացե՞ք նախադասութիւնները. կետերի տեղը ավելացը-
րէ՞ք բաց քողած բառերը:

Բաց թողած բառերը տրված են փակագծերում:

Թռչունները վոչնչացնում են վնասատու. . . . :

Մենք պետք է թռչունների համար բներ. . . . :

(միջասներին, շինեն)

5. Կարգացե՞ք նախադասութիւնները. կետերի տեղը ավելացը-
րէ՞ք բաց քողած բառերը:

Արտագրեցէ՞ք:

Դանակով կտրում են: Ուրագով :

Սղոցով : Ասեղով :

(կարում են, տառում են, սղոցում են)

Նախադասութիւնն առաջին բառը սկսում ենք մեծատառով:

6. Նախադասութիւնները կարգացե՞ք այնպիսի կարգով, Վոր
պատմվածք ստացվի:

ՀԱՍՄԻԿԸ

1. Դպրոցում նրան ալբերենարան տվեցին:

2. Մայրը Հասմիկին դպրոց տարավ:

3. Այնտեղ Հասմիկը կարգալ սովորեց:

Պատմվածքը կազմվում է նախադասութիւններից:

7. Այս պատմվածքի մեջ ամեն մի նախադասութիւնից հետո
վերջակետի տեղը գծիկներ են դրված:

Արտագրեցէ՞ք պատմվածքը և ամեն մի նախադասութիւնից
հետո գծիկների տեղը վերջակետ դրե՞ք:

ՄԵՐ ՆԱԽԱՃԱՇԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Նախաճաշի ժամանակ է || Մենք ուտում ենք հաց ու
պանիր || Մենք խմում ենք թեյ կամ կաթ || Նախաճաշից
հետո խաղում ենք բակում ||

8. Կարգացե՞ք պատմվածքը և բաժանեցէ՞ք նախադասութիւն-
ները:

Արտագրեցէ՞ք:

Ամեն մի նախադասութիւն վերջում վերջակետ դրե՞ք և վերջակե-
տից հետո մեծատառով սկսեցէ՞ք:

ԱՌԱՎՈՏԸ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Արեւը ծագում է շուրջ է շահը գալիս են բանվորները
գործարանում յետում է աշխատանքը

II. ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

9. Այս հոդվածում գտե՞ք յերկու բառից կազմված նախադասու-
թիւնը:

ՄԵՐ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Մենք կանոնավոր հաճախում ենք դպրոց: Վոչ մի որ
չենք բացակայում: Ուշացողներ չկան: Մեր դասերը լավ ենք
սովորում: Մենք բոլորս մտել ենք հոկտեմբերիկների շար-
քերը:

Նախադասութիւնը կազմվում է բառերից:

10. Բառերն իրար հետ աչնալես կապակցեցէ՞ք, Վոր կանոնա-
վոր նախադասութիւններ ստացվեն:

ՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆ ԻՆՉ ՁԱՅՆ Ե ՀԱՆՈՒՄ

Աքաղաղը կանչում է:

Ագռափները կռավում են:

Վոչնչարը :

Կովերը :

Շունը :

Գալերը :

(Վոռնում է, վոռնում են. հաչում է, հաչում են. բառա-
չում է, բառաչում են. մայում է, մայում են)

11. Բառերն իրար հետ այնպես կապակցեցեք, Վոր կանոնա-
վոր նախադասություններ ստացվին:

Ո՛Վ ԻՆՉ Ե ԱՆՈՒՄ

Կոշկակարը կոշիկ է կարում:

Դերձակները հագուստ են կարում:

. . . . քար են տաշում:

. . . . հիվանդին է բժշկում:

. . . . հաց են թխում:

. . . . ժամացույց է նորոգում:

(Ժամագործ, ժամագործներ. հացթուխ, հացթուխներ. բժիշկ,
բժիշկներ. քարահ, քարահներ)

12. Բառերն իրար հետ այնպես կապակցեցեք, Վոր կանոնա-
վոր նախադասություններ ստացվին:

Յես : Մենք :

Դու : Դուք :

Նա : Նրանք :

(կարդում ենք, կարդում են, կարդում եք, կարդում ե, կար-
դում ես, կարդում եմ)

13. Կարդացեք և կետերի տեղը հարմար բառեր դրեք:
Արտագրեցեք:

ՄԵՐ ՀՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Մենք կանոնավոր հաճախում ենք (ո՞ւր):

Վեցօրյակում 2 ժամ կարդում ենք (վո՞րսե՞ղ):

Հաճախ (վո՞րսեղի՞ց) զիրք ենք վերցնում տանը
կարդալու:

14. Կարդացեք և կետերի տեղը հարմար բառեր դրեք:
Արտագրեցեք:

ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ՀԱՅԿԸ

Հալը լերկրորդ աշակերտ է:

Նա շատ ուշադիր է :

Բոլոր ունի գերազանց գնահատականներ:
Գեղեցիկ և անսխալ է կատարում գրավոր :
(դասարան, աշխատանքներ, դասեր, առարկաներ)

15. Այս բառերն այնպես դասավորեցեք, Վոր նախադասություն
ստացվի:

Արտագրեցեք:

սովորելու, աշակերտը, դասը, նստեց

16. Կազմեցեք նախադասություններ՝ առաջին տողի բառերը
լերկրորդ տողի բառերի հետ միացնելով:

1) զրոշակները, սավառակները, նվագախումբը, շքերթը

2) ծածանվում են, թռչում են, նվագում են, շարժվում են

III. ԱՌԱՐԿԱ

17. Կարդացեք և կետերի տեղը դրեք այն բառերը, վորոնք
ցույց են տալիս, թե թված առարկաներն ինչ են:

Տանձը, խնձորը և ծիրանը պտուղներ են:

Վարդը, շուշանը և մանուշակը են:

Կաղնին, լեղեվնին և բալրախն են:

(ծառեր, ծաղիկներ)

18. Արտագրեցեք միայն գրենական պիտույքների անունները:

ԱՌԱՐԿԱՆԵՐ

դասագիրք, մասնոց, տետրակ, սղոց, մատիչ, քանափա-
ման, ռեսին, ավսե, փանոն, վրձին, ջրաներկ, հաւվիչ, կա-
ցին, գրիչ

19. Արտագրեցեք միայն հաղորդակցության միջոցների անուն-
ները:

ժամացույց, շոգեքարշ, հեծանիվ, ավտոմոբիլ, շարժա-
ցան, սավառակ, տրամվայ, կառք, սալլ

20. Կարդացեք ծաղիկների անունները:

Արտագրեցեք պտղատու ծառերի անունները:

մանուշակ, տաճենի, կակաչ, խնձորենի, վարդ, շուշան,
կեռասենի, ձնծաղիկ, սալորենի, հասմիկ, թթենի

21. Արտագրեցեք միայն ազգական ցույց տվող անունները:
հայր, ուսուցիչ, մայր, աշակերտ, քույր, լեղրալը, հորա-
քույր, աշակերտուհի, պապ, տատ, հոկտեմբերիկ, մորաքույր
22. Արտագրեցեք միայն պտուղների անունները:

ԱՄՍՈՒ

Այգիներում

դեղձ ու ծիրան,
տանձ ու խնձոր,
թութ ու սալոր,
թուզ, բալ ու նուշ.
վողջը անոնշ,
վողջը անոնշ:

23. Արտագրեցեք միայն կենդանիների անունները:

չին ծաղրածու մի կապիկ,
մի արջ, մի եշ,
նահ մի այծ կարճապիկ
ուզեցին տալ մի համերգ:

Մարդիկ, կենդանիները, բույսերը, բոլոր տեսակի
իրերը մի բառով կոչվում են առարկաներ:

24. Հետեվյալ բառերից արտագրեցեք միայն անշունչ առար-
կաների անունները:

դարբին, մուրճ, աղավնի, խոզ, հավ, հավաբուն, մեխ,
այգի, այգեպան, հաց, հացթուխ, կոշիկ, կոշկակար

25. Հետեվյալ որինականներից արտագրեցեք միայն շնչավոր
առարկաների անունները:

Ո՛Վ ԻՆՉՈ՛Վ Ե ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ

Ձին պաշտպանվում է սմբակներով, մեղուն՝ խալթոցով,
չունը՝ ատամներով, կատուն՝ ճանկերով:

IV. ԱՌԱՐԿԱՅԻ ՎՈՐՊԻՍՈՒԹՅՈՒՆԸ

26. Արտագրեցեք միայն բուսակեր կենդանիների անունները
վորպիսուրյուն ցույց տվող բառերի հետ միասին:

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

խելոք ձի	ճարպիկ այծ
հաջան շուն	բրդոտ վոչխար
մլավան կատու	հիմար եշ

27. Վորպիսուրյուն ցույց տվող այս բառերով դառեք այն առար-
կաները, վորոնց վերաբերում են նրանք:

Ե Ո՞Ն Ի՞Ն Ե, Ի՞Ն Ի՞Ն

սպիտակ, փափուկ, սառն...
գեղեցիկ, անուշահոտ, կարմիր, փոփոս....
բարձր, սերեվախիս, բազմանյութ, նկուն....

(վարդ, ձյուն, բարձի)

28. Գրեցեք վայրի կենդանիների անունները վորպիսու-
թյուն ցույց տվող հարմար բառերի հետ միասին:

արջ, նապաստակ, աղվես, մրթմրթան, վախկոտ, խորամանկ
Որինակ՝ մրթմրթան արջ:

29. Առարկաների անուններից առաջ վորպիսուրյուն ցույց տվող
հարմար բառեր ավելացրեք:

ԻՆՉՊԻՍԻ՞ ՍՈՒՐԿԱՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ
աշխատասեր մըջուն ածուխ
..... արեվ քացախ
..... աշակերտ դրոշակ

(փայլուն, կարմիր, թթու, սեւ, գեղազանցիկ)

30. Կարգացե՛ք և վորպիսուրյուն ցույց տվող բառերից հետո
հարմար առարկաների անուններ գրե՛ք: Արտագրեցե՛ք:

սպիտակ շուշան	սառն	
քաղցր	պայծառ	
կապույտ	հարվածալին	

(ճախար, բանվոր, մանուշակ, ձյուն, յերկինգ)

Այն բառերը, վորոնք պատասխանում են վորպիսի կամ ինչպիսի՞ հարցերին, ցույց են տալիս առարկայի վոր պիտուի լինելը կամ հատկությունը:

31. Կարգացե՛ք և կետերի տեղը հարցերին համապատասխան վորպիսուի լինելը կամ հատկությունը ցույց տվող բառեր դրե՛ք:

ԳՍՐՈՒՆԸ ՅԵԿԱՎ

Մերուն գարունը լեկավ:(ինչպիսի՞) արե՛վը փայլում է:(ինչպիսի՞) խոտը լերե՛վաց:(ինչպիսի՞) ծաղիկներ ծաղկեցին:(ինչպիսի՞) թռչունները թռչում են: (ծվլան, հոսավե, կանաչ, պայծառ)

32. Արտագրեցե՛ք և կետերի տեղը դրե՛ք հատկությունը ցույց տվող բառեր:

ԱՆՏԱՌՈՒՄ

....լերկնքում չեր լերե՛վում վոչ մի ամպ: Ինչ լավ եր.... անտառում:խոտը փայլում եր ցողի կաթիլներին:թռչունները լերե՛վում ելին: շուշանները ևմանուշակները ծաղկե՛լ ելին: (կապույտ, ծառաւա, կանաչավե, սպիտակ, կապույտ, նախշուն)

33. Արտագրեցե՛ք միայն հատկությունը ցույց տվող բառերը:

Աչքերը չալ-չալ, դունչը սպիտակ, գլուխը փոքրիկ, վոտքերը բարակ, մարմինը ավան, պոչը շատ լերկար, ծալը փնջավոր, ալ, ալսպես եր Նարգիզ հորթը:

34. Արտագրեցե՛ք:

Ամեն մի նախադասության մեջ առարկա ցույց տվող բառերի տակ յերկու զիծ քաշեցե՛ք, իսկ առարկայի գործողությունը ցույց տվող բառերի տակ մեկ զիծ քաշեցե՛ք:

ԱՆՏԱՌՈՒՄ

Ազոավը կռավում է: Ոճը ֆշշում է: Բզեզը բզզում է: Փայտփորը թխկթխկացնում է: Գալը վոռնում է: Արջը մըթմըթում է:

Որինակ՝ ազոավը կռավում է:

35. Գործողությունից իմացե՛ք առարկան և կարգալիս առարկային անունը դրե՛ք կետերի տեղը:

ՎՈՐ ԱՌԱՐԿԱՆ ԻՆՉ Ե ԱՆՈՒՄ ԿԱՄ ԻՆՉ Ե ԼԻՆՈՒՄ

Կոլտնտեսականը վարում է, ցանում է, հնձում է:
 կարդում է, գրում է, հաշվում է:
 ծլում է, կանաչում է, ծաղկում է:

Այն բառերը, վորոնք պատասխանում են ի՞նչ ե անում կամ ի՞նչ ե լինում հարցերին, ցույց են տալիս առարկայի գործողությունը:

36. Արտագրեցե՛ք:

Գործողությունը ցույց տվող բառերի տակ զիծ քաշեցե՛ք:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ

Յես գրում եմ: Մենք կարդում ենք:
 Դու նկարում ես: Դուք լերգում եք:
 Նա կարում է: Նրանք խաղում են:

37. Կարգացե՛ք. կետերի տեղը ավելացրե՛ք հարմար բառեր, վորոնք ցույց տան, թե ի՞նչ ե լինում առարկան:

Զուրը գործընկերանում ե: Գետը . . . : Շապիկը . . . :
Վառարանը . . . :

(հոսում ե, վառվում ե, լվացվում ե)

38. Արտագրեցեք:

Գործողությունն ցույց տվող բառերի տակ գիծ քաշեցեք:

ԻՆՉՊԵՍ ԵՄ ՅԵՍ ԱՐՏԱԳՐՈՒՄ

Արտագրում եմ բառը մի անգամից և վոչ տառ-տառ:

Արտագրում եմ գեղեցիկ և վոչ մի տառասխալ, չեմ ա-
նում:

39. Կարդացեք և կետերի տեղը զրեք հարմար բառեր:

Արտագրեցեք:

Աշակերտը սովորում ե (վճռտեղ):

Աշակերտը կարգում ե (խնչ):

Աշակերտը գրում ե (ինչո՞վ):

(դպրոցում, գիրք, գրիչով)

40. Արտագրեցեք:

Գործողությունն ցույց տվող բառերի տակ մի գիծ քաշեցեք. ա-
ռարկայի անունների տակ յերկու գիծ, իսկ վարպետությունն ցույց տը-
վող բառերի տակ՝ ալիքանման գիծ:

Պայծառ արե՛վը փալլում ե:

Կոշկակարը կարեց գեղեցիկ կոշիկներ:

Ջանասեր աշակերտը լավ ձեռագիր ունի:

Գերազանցիկ աշակերտուհին պարգևատրվեց:

VI. ՄԵԾԱՏԱՌՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՍԿԶՐՈՒՄ

1. Արտագրեցեք միայն այն բառերը, վորոնք վերջակետից հե-
տո չեն, բայց մեծատառով են սկսված:

ԶԳՏԱՆ

— Սուրբիկ, Շուշիկ, Սեդրակ, Միսակ, մեր հավերին դուք
չտեսնա՞ք: Անուշ, Սիրուշ, Խորեն, Կարեն, լեւեք, տեսե՞ք հա-
վերն ո՞ւր են:

Որինակ՝ Սուրբիկ, Շուշիկ (իցիցնե՛րդ շարունակեցե՛ք):

Գրելիս մարդկանց անուններն սկսում ենք մեծա-
տառով:

42. Արտագրեցեք և յերեխաների անունների տակ գիծ քաշեցե՛ք:

ԳԵՐՍԱԶԱՆՑԻԿ ԽԱԶԻԿ

Գերազանցիկ եմ, Պերիկ,
աշխատում եմ մեղվի պես:
Լսե՛ք, Լուսիկ ու Զարիկ,
սոցմրցման եմ կանչում ձեզ:

43. Կարդացե՛ք: Արտագրեցե՛ք տղաների անունները:

Գերազանց առաջադիմության և որինակելի վարքի հա-
մար զո՞վասանագրեր տվեցին Վաղարշակին, Աշոտիկին, Անա-
հիտին, Արուսին, Վահագին, Լեւոնին, Հակոբիկին:

44. Արտագրեցե՛ք: Ընդգծեցե՛ք մարդկանց անունները (սակը գիծ
հաշեցե՛ք):

Այս վարդը տուր մեր Վարդին:

Ծեր ե պապիկը, նրան սիրում ե իր թոռ Պապիկը.

45. Արտագրեցեք և կետերի տեղը զրեք հարմար բառեր:

Չմոռանա՛ք մարդկանց անուններն սկսել մեծատառով:

1. Այգում մայրը պոկում եր. . . . :

2. Մեր սիրում ե :

(1. հասմիկ, Հասմիկ, 2. աղավնի, Աղավնի)

46. Այս ձվով զրեցեք ձեր ընտանիքի մասին:

ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Յես ինն տարեկան եմ: Անունս ե Ցուլակ: Ունեմ հալը
ու մայր, լերեք լեղբայր և լերկու քույր: Մենք բոլորս կազ-
մում ենք մի ընտանիք: Մեր ազգանունն ե Հակոբյան:

Գրելիս մարդկանց ազգանունները նույնպես
սկսում ենք մեծատառով:

47. Արտագրեցեք և կետերի տեղը ավելացրեք ձեր հայոց լեզվի
դասատվի անուն, ազգանունը:

Յես սովորում եմ լեռնորդ դասարանում: Մեր հայոց
լեզվի դասատուն է ընկ. . . . :

48. Արտագրեցեք և կետերի տեղը գրեցեք ձեր դասարանի գե-
րազանցիկների ազգանունները:

Մեր դասարանի գերազանցիկներն են :

49. Ասացեք միայն հավի և վառեկների անունները:

Ո՞վ ե՞ր ՄԵՂԱՎՈՐԸ

Սարգը կախ եր արեւ իր բարակ թելը ծառի ճյուղից ու
վալը իջել:

Ճուտիկը, Մուտիկը և Ճիւղտուրիկը, Չալ հավիկի գիժ
վառեկները, սարդին տեսան:

— Ի՞մն է, — ճվաց Ճուտիկը:

— Չէ, իմն է, — ճչաց Մուտիկը:

— Չէ, իմն է, իմը, — ճրկճկաց Ճիւղտուրիկը:

Ու լերեքն եւ իսկույն վազեցին, վոր սարդին բռնեն և
ուտեն:

Իրար անքան բոթեցին, հրեցին, վոր եւ սարգը չսպա-
սեց ու իր թելով վեր փախավ:

— Հիմա այս ի՞նչ արիք, — ճչում եր Ճուտիկը:

— Դո՛ւք վախեցրիք, — ծվում եր Մուտիկը:

— Իմ սարդն ինչո՞ւ փախցրիք, — լաց եր լինում Ճիւղ-
տուրիկը:

Գրելիս կենդանիներին տրվող անունները նույն-
պես սկսում ենք մեծատառով:

50. Արտագրեցեք և ընդգծեցեք կենդանիների անունները:

ՆԱՐԳԻՋՆ ՈՒ ԾԱՂԻԿԸ

Մեր Նարգիզ կովը սիրում է նարգիզ, իսկ Ծաղիկ հոր-
թը սիրում ծաղիկ:

51. Ընտրեցեք վերնագիր:

Արտագրեցեք ճիշտ կարգով:

Նրա անունը Բոբ է:

Մենք ունենք մի շուն:

Յես շատ եմ սիրում մեր Բոբին:

52. Արտագրեցեք և կետերի տեղը գրեք հարմար անուններ:

Հովիվ արածացնում է նախիրը: Նախրի մեջ ա-
մենից գեղեցիկ կովերն են՝ և : Հովիվ
ունի լերկու շուն. սեվին կանչում են , իսկ սպիտա-
կին՝ :

(Չալանկ, Թռփլան, Խնձոր, Կարմիր, Նեան)

53. Արտագրեցեք և ընդգծեցեք ֆաղափ, գյուղի, գետի և սարի
անունները:

Ի՞նչ ՏԵՍԱ

Յերեվանը շատ գործարաններով տեսա, Արմավիրը բամ-
բակով առատ տեսա, Չանգու՛ն ելեկտրակայաններով տեսա,
Արագածը տուֆով հարուստ տեսա:

Գրելիս ֆաղափների, գյուղերի, գետերի և սարերի անունները
նույնպես սկսում ենք մեծատառով:

54. Արտագրեցեք միայն գյուղի, օրջանի և կայաքանի անունները:

ՂՇԼԱՂ ԳՅՈՒՂԸ

Ղշլաղ գյուղը գտնվում է Կիրովականի շրջանում: Այդ
գյուղի կողքով հոսում է Փամբակ գետակը: Ղշլաղից 3 կիլո-

մետր հեռավորության վրա գտնվում է Կիրովական կայարանը:

55. Արտադրեցեք միայն քաղաքների անունները:

Անդրկովկասի նշանավոր քաղաքներն են Թիֆլիսը, Բաքուն, Յերեվանը, Կիրովաբադը, Բաթումը, Լենինականը:

56. Արտադրեցեք միայն մարդկանց և քաղաքի անունները:

ԲՍՈՍԽԱՂԵՐ

Դու ել խոսիր, աչ Խորեն,
քո մտքերն ել շատ խոր են:
Թե այդիներ լերեվան,
դու կհասնես Յերեվան:

57. Արտադրեցեք և փողոցների անուններն ընդգծեցեք:

ՅԵՐԵՎԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ

Լերեվանում կան բազմաթիվ փողոցներ: Ահա նրանցից մի քանիսի անունները՝ ենինի փողոց, Աբովյան փողոց, Խորհուրդների փողոց:

Գրելիս փողոցների անունները նույնպես սկսում ենք մեծատառով:

58. Այս հոգեվածից արտադրեցեք նախ՝ մարդկանց անուն, հայր-անուն ու ազգանուններ, ապա՝ քաղաքների և հետո՝ գետի անունները:

ՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

Վլադիմիր Իլիչ Լենինը և Իոսիֆ Վրասաբեկովիչ Ստալինը մեր առաջնորդներն են: Լենինը մեռել է Գորկայում. նրա գամբարանը գտնվում է Մոսկվայում: Ստալինը ծնվել է Գորի քաղաքում, վորը գտնվում է Քուռ գետի ափին:

59. Արտադրեցեք այս հասցեն:

Նամակ-
նիշ

Յերեվան

Սպանդարյան փողոց, № 98

Արիֆի Գրիգորյանին

VII. ՎԱՆԿ ՅԵՎ ԲԱՌԵՐԻ ՏՈՂԱԴԱՐՁ

60. Որոք ասելիս բառերը չերգելով և չերկարացնելով մաս-մաս՝ վանկ-վանկ են արտասանում: Այդ ձևով դանդաղ կարդացեք «Ուր» վոտանավորը:

Արտադրեցեք՝ բառերը գծիկներով վանկերի բաժանած:

ՈՐՈՐ

Ո—ր՞ր, ո—ր՞ր, իմ սի—րու—նիկ,
ո—րոք ա—սեմ ու նա—նաս.
լեր—կա՞ր ապ—րես, կար—մի՞ր ո—րեր,
կար—մի՞ր ա—րե՞վ ու—նե—նաս:

Բառն ունենում է մեկ կամ մեկից ավելի վանկեր:

61. Խաղեր կազմակերպելիս վիճակ են գրում՝ բառերը վանկ-վանկ արտասանելով:


Վանկերի բաժանած կարդացեք այս վոտանավորը:

Արտադրեցեք վոտանավորը՝ բառերը վանկերի բաժանած:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

կար—մի՞ր բա—նա—կը
պա—հակն է յերկ—րի,
առ—խա—սե՛ֆ հան—գիս,
բան—վո՛ր, գյու—ղա—ցի՛:

62. Այս վանկերից բառեր կազմեցե՛ք և գրեցե՛ք: Գրելիս բառե-
րը գծիկներով վանկերի չբաժանե՛ք:



63. Լրացրե՛ք թռչունների անունների բաց բոլորած վանկերը և
գրեցե՛ք վանկերի բաժանելով:

— քալ | ծի — նակ | բա —
— փոր | ա — ղաղ | աղ —

(փայտիոր, կախավ, ագռավ, ափաղաղ, ծիծեռնակ,
բազե)

Որինակ՝ սարյակ:

ՎԱՆԿԱԽԱՂ

Գտե՛ք այս շարադի լուծումը:

Առաջին վանկը վառելիք է:

Յերկրորդ վանկը մարմնի մաս է:

Ամբողջ բառն՝ անտառի թռչուն է:

Շարադի լուծումը՝ փայտիոր:

64. Գծիկների տեղը դրե՛ք բաց բոլորած վանկերը և գրեցե՛ք վան-
կերի բաժանելով:

պի—ներ, կոլեկ—, —մունիստ, —ծարան, դասա—, լուսա—,
թանաք—ման, պահա—

65. Ասացե՛ք անուններ, վորոնց առաջին վանկը լինի՝
Մա, Կա, Ա, Դա, Թա, Նու. որինակ՝ Մարո:

66. Առանց վանկերի բաժանելու արտագրեցե՛ք վոտանավորի
ձեվով:

ԱՇՈՒՆ

Դաշ-տը մեր-կա-նում, ո-րը կար-ճա-նում, քա-մին է
խա-ղում, անձ-րե-վը մա-ղում:

Վանկերի թվին նայելով բառերը լինում են՝ միավանկ
(սաբ), յեկավանկ (սեղան), յեռավանկ (լուսա-մուտ) և այլն:

Մեկից ավելի վանկ ունեցող բառերը կոչվում են բազմա-
վանկ:

Միավանկ բառերն արտասանվում են մի անգամից, իսկ
բազմավանկ բառերն արտասանվում են վանկ-վանկ, այսինքն
քանի վանկ կա բառի մեջ, բառն այնքան մասի յե բաժանվում:

67. Նախ՝ արտագրեցե՛ք միավանկ, ապա՝ յեկավանկ և հետո՝ յե-
ռավանկ անունները:

Արաքսի, Արտավազդ, Կարեն, Հեղինե, Կարապետ, Սոս,
Լեվոն, Սուրեն, Աղասի, Գեղամ

68. Արտագրեցե՛ք. բազմավանկ բառերը գծիկներով վանկերի
բաժանեցե՛ք:

ԱՌԱՃՆԵՐ

Ով՝ կաշխատի՝ նա կուտի:

Մի ձեռը ծափ չի տա:

Այսորվա գործը վաղվան մի թողնիր:

69. Արտագրեցե՛ք շուտասելուկը և բառերը գծիկներով վանկերի
բաժանեցե՛ք:

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

Սանասար, ասա սար,

սար ասա, Սանասար:

70. Արտագրեցե՛ք բառախաղերը. բառերը գծիկներով վանկերի
բաժանեցե՛ք:

ԲԱՌԱՅԱՂՆԵՐ

Ամեն տարի գարնանը՝

մեր տուն պիտի գար նաև:

Ներս արի, ա՛րթու,

ու բեր ինձ արթու:

71. Արտագրեցե՛ք կարճ տողերով ներքեվում ցույց տված ձե-
վով, վորպեսզի տողադարձ անելը շուտ-շուտ պատահի:

Հոկտեմբերիկը միշտ պատրաստ է կատարելու Լենինի ասածները: Լենինն ասում է. «Սովորիր, սովորիր, սովորիր»: Հոկտեմբերիկն առաջավոր աշակերտ է:

Որինակ՝

Հոկտեմբե-

րիկը միշտ պատ-

րաստ է կատա-

րելու Լենինի...

Գրելու ժամանակ, յերբ բառը չի տեղավորվում տողում, բառի մեկ կամ մի քանի վանկը տակի տողն ենք տանում՝ տողադարձ եմք անում:

Տողադարձի ժամանակ տողի վերջում գրվում է տողադարձի նշան(-):

Միավանկ բառերը չի կարելի տողադարձ անել:

Տողադարձ անելու համար պետք է բաղձավանկ բառերը կանոնավոր կերպով վանկ-վանկ արտասանել և ամբողջական վանկը կամ վերի տողում գրել կամ տակի տողն անցկացնել:

72. Արտագրեցեք կարճ տողերով միայն ընդգծված մասը:

ՎԱՐԴԱՆ ԱՊԻՆ

Վարդան ապին ու Վահանը հանդում կովեր ելին պահում:

— Վահան, Վահան, — ասավ ապին, —

կամ դո՛ւ վագիր՝ յե՛ս տուր,

յես հաց ուտեմ, կամ յես հաց

ուտեմ, դո՛ւ վագիր՝ կովերը յե՛ս տուր:

VIII. ԶԱՅՆԱՎՈՐ ՅԵՎ ԲԱՂԱԶԱՅՆ ՀՆՁՅՈՒՆՆԵՐ
ԱՅԲՈՒԲԵՆ

73. ա) Արտասանեցեք ա, ե, ը, ի, ու հնչյունները:

Ինչպիսի՞ գիրք է ունենում բերանն այդ հնչյուններն արտասանելիս:

Այդ հնչյունները կարելի՞ յե յերգելով արտասանել:

բ) Արտասանեցեք բ, գ, դ, զ, ք, ժ, յ, խ, ծ, կ հնչյունները: Իսկ այս հնչյունները կարելի՞ յե յերգելով արտասանել:

Վանկը ունենում է մեկ կամ մեկից ավելի հնչյուններ:

Հնչյունները լինում են ձայնավոր և բաղաձայն:

Ձայնավոր հնչյուններն են՝ ա, ե, ը, ի, ու, ու:

Բաղաձայն հնչյուններն են՝ բ, գ, դ, զ, ք, ժ, յ, խ, ծ, կ, հ, ձ, դ, ն, մ, յ, ն, շ, չ, պ, զ, ու, ս, վ, զ, ք, ց, փ, ք, ֆ:

Հայոց լեզվի հնչյուններից 6-ը ձայնավոր են, իսկ 30-ը՝ բաղաձայն:

74. Արտագրեցեք.

Ընդգծեցեք ձայնավորները:

Ամբողջ տարվա ընթացքում

չունեմ վոչ մի ուշացում:

75. Դրեք՝ լեզ ընթացքներն են բաց բողբոլած այս բառերում:

պիտ—նեք

դոր—արան

դե—ձ

տա—ձ

նար—գիդ

աշա—երտ:

76. Արտագրեցեք և ընդգծեցեք կրկնակ բաղաձայնները:

ԵՄՄԱՆ

Եմման տարրական դպրոցի լերրորդ դասարանումն է: Չնայած նա մի քիչ չարաճճի չէ, բայց շատ լավ սովորում է և ոգնում դասերի մեջ իր ընկերուհիներ Աննային և Զեմմային:

77. Արտագրեցեք վանկերի բաժանած:

Ամեն մի վանկում ընդգծեցեք ձայնավորները:

ԱՐԱԳԻՆ

Ա—բա—գիլ, բա—բոլ չե—կար,

հեյ, ա—բա—գիլ, բա—բոլ չե—կար.

բու—նըդ շի—նիլ են հին ծա—ռին,

մեկ մոտ մը—նա ամ—բողջ տա—րին:

Առանց ձայնավորի վանկ չկա: Ձայնավորը մենակ կարող է վանկ կազմել: Բառի մեջ վորքան ձայնավոր լինի, այնքան էլ վանկ կլինի:

Որինակ՝ արագիլ բառը եռավանկ է, վորովհետև նրա մեջ յերեք ձայնավոր կա:

78. Կազմեցեք նախադասություններ հետևյալ բառերով և գրեցեք:

բծիշկ, դպրոց, գրադարան, մկրատ, նկար

Բառամիջուկ լավող ր ձայնավորը միշտ չի գրվում: Որինակ՝ արտասանում ենք գրտնել, բայց գրում ենք գտնել:

Գտնել բառի առաջին վանկը գաղտնավանկ է:

79. Արտագրեցեք՝ վանկերի բաժանած:

բը — ժիշկ. դըպ — րոց, գը — րա — դա — րան, մըկ — րատ, նը — կար, բար — ձըր, գը — լուխ, կը — տավ, թըռ — ուն, մա — նըր, քաղ — ցըր, ար — կըղ, Մը — կըր — տիչ

Բառամիջուկ լավող ր ձայնավորը վանկերի բաժանման ժամանակ գրվում է:

80. Կարգացեք վանկերի բաժանած:

ՄԵՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Մեր բը — նա — կա — րա — նը գըտ — նը — վըւմ է Յե — րե — վա — նում: Զե — նի — նի փո — դո — ցի վը — րա:

Մենք բը — նակ — վում ենք «Ար — շա — լույս» բը — նակ — շին կո — ոպ ըն — կե — րու — թյան ու — սուց — չա — կան լու — սա — վոր, մա — քուր և գե — դե — ցիկ շեն — քում:

Մեր բը — նա — կա — րա — նը ու — նի լե — րեք սե — նյակ՝ մեկ ըն — դու — նա — րան, մեկ սե — դա — նա — տուն, մեկ էլ նըն — ջա — րան:

81. Արտագրեցեք՝ բառերը գծիկներով վանկերի բաժանած:

Թ Ի Թ Ե Ռ

Պու-տիկ, պու-տիկ,

պուտ-պու-տիկ,

շը-ղարշ թե-վեր

խա-տու-տիկ,

շո-ղե-րի տակ

վառ-վը-ռուն,

վոր-տեղ ծա-ղիկ՝

դու տի-տիկ:

82. Գրեցեք հանելուկի լուծումը վորպես վերնագիր և ապա՝ արտագրեցեք հանելուկը՝ վանկերի բաժանելով:

Աչքեր ունի՝ վոտքեր չունի,

գլուխ ունի՝ ձեռքեր չունի.

հավիկիթ ունի՝ փետուր չունի.

շորեր ունի, վոր կար չունի:

Հանելուկի լուծումը՝ ոձ:

83. Բառերը գծիկներով վանկերի բաժանեցեք, նույն բառերը տողադարձի համար յեղիուական մասի բաժանեցեք:

Հոկտեմբերիկ, կոմունիստ, տպարան, Մկրտիչ, գրադա-
րան, դպրոցներ, թվաբանություն, նկարչություն

Որինակ՝ հոկ — տեմ — բե — րիկ, հոկ — տեմբերիկ,
հոկտեմ — բերիկ, հոկտեմբե — բիկ. տը — պա — րան, տը — պարան,
տպա — րան. Մը — կըր — տիչ, Մը — կըրտիչ, Մկըր — տիչ:


Տողադարձի ժամանակ բառամիջի ր ձայնավորը գրվում է միայն առաջին տողի վերջին վանկում և յերկրորդ տողի առա-
վանկում:

84. Արտագրեցեք կարճ տողերով, վոր տողադարձ անելը շուտ
շուտ պատահի:

ՄԻԹԵ ԻՆՁ ՉԵՔ ՍԻՐՈՒՄ

Յեա գարունն եմ: Յեա բերում եմ պայծառ արեւոյ ու տաք որեր: Յեա ծածկում եմ դաշտերը դալար խոտերով: Յեա սփռում եմ ամեն տեղ ծաղիկներ ու թիթեռներ:

ՏԱՌԱՆԱՂ



Ստորակետի տեղ մի թիվ գրեցեք, միջակետի տեղն եւ՝ մի տառ:

Կստացվի շատ քաղցր պաղի անուն:

Վսրն ե այդ պտուղը:

Տառախաղի լուծումը՝ բուք:

Հնչյունի նշանը կոչվում ե քառ:

Հնչյունն արտասանվում ե և լսվում:

Տառը գրվում կամ տպվում ե և կարդացվում:

85. Արտագրեցեք և ամեն մի բառի վերեւը գրեցեք տառերի թիվը:

ՉՅՈՒՆԸ

Մեծ փաթիլներով

սիրուն ու նախշուն

մաղում ե ձյունը

սարում ու դաշտում:

86. Այբուբենից արտագրեցեք միայն փոքրատառեր:

Ա յ Բ ո ւ Բ ե ն

Աա	Բբ	Գգ	Դդ	Եե	Զզ
Ըը	Թթ	Ժժ	Իի	Լլ	Խխ
Ծծ	Կկ	Հհ	Ձձ	Ղղ	Ճճ
Մմ	Յյ	Նն	Շշ	Ոո	Ռռ
Չչ	Պպ	Ջջ	Ռռ	Սս	Վվ
Տտ	Բբ	Յյ	Փփ	Քք	Ֆֆ

Տառերի սովորական շարքը կոչվում ե այբուբեն:

Հայոց լեզվի այբուբենն ունի 36 տառ:

Ամեն տառ ունի լեզվու ձեւ՝ մեծատառ և փոքրատառ:

Տառ:

87. Այբուբենից արտագրեցեք միայն մեծատառեր:

88. Այս բաղաձայնների դասավորեցեք այբբենական կարգով:

Ժ Բ Գ Դ Ե Զ

Այժմ այբբենական կարգով դասավորեցեք ձայնավորները:

ու ո ի ը ե ա

89. Այս հոգվածից արտագրեցեք մարդկանց ազգանունները:

ԿԱՐԵՆԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆԸ

Հոկտեմբերիկ Կարենն իրենց տանը սարքեց լենինյան անկյուն, վորտեղ կախեց Լենինի, Ստալինի, Կալինինի, Մոլոտովի, Վորոշիլովի և Շահումյանի նկարները: Որինակ՝ Լենին, Կալինին (ինքներդ շարունակեցեք):

90. Արտագրեցեք:

ԳԱՐՆԱՆԱՅԱՆ

Գարնան մատաղ, և սկսվեց
վառ արեվից հանդ ու դաշտում
մռայլ և ցուրտ բոլշևիկյան
որերն անցան, զարնանացան:

Առանձին գործածելիս յեվ-ը կարճ գրում է և, վորը կոչվում է սղագրություն նշան:

Սղագրության նշանը մեծատառ չունի և գրվում է յերեք տառով (Յեվ). որինակ՝ Յեվգինե:

91. Արտագրեցեք: Ընդգծեցեք սղագրության նշանը:
Յեվգինեն և Յեվան դեղեցիկ և անսխալ են գրում:

IX. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՅՑՈՒՆՆԵՐ

1) Գրում ենք դ, արտասանում՝ ք:

92. Արտագրեցեք: Ընդգծեցեք Վարդուհի բառի դ տառը:

ՄԻՍՄԻՏ ՎԱՐԴՈՒՀԻՆ

Փոքրիկ Վարդուհու մայրը ծանր հիվանդ էր: Բժիշկը հիվանդին դառն դեղ էր տվել խմելու: Մայրը զգվելով էր խմում դեղը: Վարդուհին այդ վոր տեսավ, ասաց. «Մայրիկ, թող քո փոխարեն լես խմեմ դեղը»:

* Վարդուհի, վարդ, վարդան, վարդանուշ

Շատ բառերում տառերը ինչպես վոր արտասանում ենք, այնպես չենք գրում:

Որինակ՝ Վարդուհի բառի մեջ գրում ենք դ, բայց արտասանում՝ ք:

93. Արտագրեցեք այն բառերը, վորոնց մեջ շեղատառերը չեն համապատասխանում իրենց հնչյուններին:

Մեր հորթը մնաց հորդ անձրեվի տակ:

Վորդերը փչացրին խաղողի վորթը:

* հորդ, վորդ

94. Արտագրեցեք: Ընդգծեցեք դ տառը, վորը իր հնչյունի նման

չի արտասանվում:

ԴԱՇՏԻ ՎԱՐԴԸ

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
մի վարդ տեսավ դաշտի միջին.
վարդը տեսավ, ուրախացավ,
մոտիկ վազեց սիրուն վարդին:

95. Գրեցեք շարադի լուծումը:

ՇԱՐԱ

Ութ տառանի մի բառ եմ:

Մեկ վանկով ծաղիկ եմ:

Յերկու վանկով տղալի անուն եմ:

Յերեք վանկով աղջկա անուն եմ:

Շարադի լուծումը՝ վարդ, Վարդան, Վարդանուշ, Վարդուհի

96. Պատաստեցեք այս բառացուցակը:

Արտասանում ենք ք, բայց գրում՝ դ:		
անդամ	ժողովուրդ	յերկրորդ
զարդ	կարդալ	ող
ընդունակ	կենդանի	վարդ
ընդունել	մարդ	վարդան

97. (ստուգողական արագություն). Արտագրեցեք և գծիկներով տեղը դրեք բաց քողած տառերը:

Շնչելու համար մար—ուն հարկավոր է ո—: Սավառակը հպարտ սուրում է ո—ում: Մոծակը թռավ, բոլոր կեն—անի—ների արջան համի առավ և տեսավ, վոր ամենից քաղցրը մար—ու արյունն է:

* մարդ, ող, կենդանի, մարդիկ, ողանավ

98. Արտագրեցեք: Ընդգծեցեք դ տառը, վոր արտասանվում է ք:

ԿԱՐԴԱՆ

Կարդա, ա՛յ իմ խելոք մանուկ,
կարդա, գրի՛ր տարին բոլոր.
Կարդացողի խելքն ե կտրուկ,
միտքը պայծառ ու լուսավոր:

* կարդալ, կարդացող

99. Արտագրեցէք: Ընդգծեցէք զ տառը, վոր արտասանվում ե ք:
Ա՛յ, իմ փունջը, իբրեւ լավ զարդ, տեսնում ե միշտ ա-
մեն մի մարդ:

Ծերը գնում եր ձուկ բռնում ծովից, պառավն ել տանը
թել եր մանում բրդից:

Գարնանը հորդ անձրեւ ե գալիս, և գետերը հորդանում են:

* զարդ, մարդ, հորդ, հորդանալ, բուրդ

100. Պատրաստեցէք այս բառացուցակը:

Արտասանում ենք ք, բայց գրում՝ դ:		
արդեն	խնդիր	վորդ
բուրդ	խորհուրդ	վորդի
դղում	հորդ	վորսորդ
թաղելուս	ճանապարհորդ	քառորդ

2) Գրում ենք զ, արտասանում՝ ք:

101. Արտագրեցէք: Ընդգծեցէք այն բառերը, վորոնց մեջ գ
տառը արտասանվում ե ք:

ԿՈՒՏԵՆՍԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Ամուսն շոգերին
վոսկեզոծ դաշտում
մեծ կոմբայններով
ցորեն են հնձում:

* շոգ

102. Արտագրեցէք: Ընդգծեցէք գ տառը, վոր չի համապատաս-
խանում իր հնչյունին:

ԱՅԳԻ

Կանաչիր, կանաչիր,
իմ սիրուն աչգի,
կանաչ ու կարմիր
խառ շորեր հագի:

* հագի, հագնել, հագուստ

103. Պարաստեցէք այս բառացուցակը

Արտասանում ենք ք, բայց գրում՝ գ:		
կարգ	Մարգարիտ	մրգեղեն
յերգ	Մարգիտ	պարգեւատրել
	հոգնել	գոգնոց
	նորոգել	հոգնակի
	ոգնել	ոգտակար
կարագ	ծագել	Ավագ
ուրագ	հագնել	Գրիգոր

104. Արտագրեցէք: Ընդգծեցէք այն բառերը, վորոնց գրու-
թյունը չի համապատասխանում արտասանությանը:

ՓՈՔՐԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Թագունին և Մարգարիտը հագան իրենց նոր հագուստ-
ները, կապեցին գոգնոցներն ու գնացին դպրոց. աշակերտա-
կան հանգեսին յերգելու և արտասանելու:

— Ա՛յ, յերբ պիտի լես ել նրանց պես կարդամ, գրեմ,
յերգեմ ու արտասանեմ,—ասում ե փոքրիկ Գրիգորը:

* Թագունի, Գրիգոր, հագնել, յերգել, հագուստ, գոգնոց,
յերգ

105. Արտագրեցէք և ընդգծեցէք գ տառը, վոր արտասանվում
ե ք:

Առարկան ունի յերկու թիվ՝ լեզակի և հոգնակի:

Ուրագը միշտ իր կողմն ե տաշում:

Հոգնած ժամանակ սառը ջուր չպետք ե խմել:

* հոգնած, հոգնել, ուրագ, հոգնակի

106. (սուգողական արագություն). Արտագրեցեք և գծիկներով տեղը դրեք բաց քողած տառերը:

Ա՛յ տղա, անունդ Ավա—, քեզ կուտեցնեմ մեղր ու կա—
րա—:

Կար—ապահ Սար—իսը լերկու ան—ամ պար—եվատըը—
վեց:

3) Գրում ենք բ, արտասանում ենք փ:

107. Արտագրեցեք:

Ընդգծեցեք բ տառը, վոր արտասանվում է փ:

Հատակը չոր ավելով չսրբեք: Հատակը սրբելիս լուսա—
մուտը բացեք:

Խլուրդը լերբեք բուսեղեն կերակուր չի ուտում:

* սրբիչ, սրբել, լերեսսրբիչ, լերբեք

108. Պատրաստեցեք այս բառացուցակը

Արտասանում ենք փ, բայց գրում՝ բ:		
Գաբրիել	Հակոբ	համբուրել
յերբ	Սերոբ	սրբել
յերբեք	Քերոբ	Սրբուհի

109. (սուգողական արագություն). Արտագրեցեք և գծիկներով տեղը դրեք բաց քողած տառերը:

Հակո—ը, Սերո—ը և Սր—ուհին լեկան Քերո—ի մոտ,
լեր— նա գնացել եր Պատանի հանդիսատեսի թատրոնը:

Դար—ին Դա—րիելը դար—նոցում պալտեր ե շինում:

110. Պատրաստեցեք այս բառացուցակը:

Արտասանում ենք պ, բայց գրում՝ բ:		
աղբ	աղբյուր	յեղբայր

111. Արտագրեցեք:

Ընդգծեցեք բ տառը, վոր արտասանվում է պ:

Չորս լեղրայր իրար լետեվից վազում են, վազում, բայց
լերբեք իրար չեն հասնում: Աղբով պարարտացնում են հողը:
Անխնականում շատ աղբյուրներ կան:

4) Գրում ենք ջ, արտասանում՝ չ:

112. Գրեցեք նախադասություններ հետևյալ բառերով.

արջ, մրջյուն, վերջ, վերջակետ, ամբողջ, հաջող, առողջ,
առաջնորդ, վերջին, առաջին

113. Պատրաստեցեք այս բառացուցակը:

Ի և ղ բաղաձայններից հետո, լեթե լսվում է չ, մեծ մասամբ գրվում է ջ:		
ը ջ	արջ	աղջիկ
	թրջել	ամբողջ
	մրջյուն	առողջ
	լերջանիկ	չղջիկ
	վերջ	վողջուն
		ղ ջ

114. Պատրաստեցեք այս բառացուցակը:

աջ	հաջել	միջակետ
առաջ	հաջող	միջատ
առաջին	մեջ	միջոց
առաջնորդ	մեջք	տիրոջ
իջնել	միջակ	քրոջ

115. (սուգողական արագություն). Արտագրեցեք և գծիկներով տեղը դրեք բաց քողած տառերը:

Ար—ը ի—ավ ծառից: Մենք ապրում ենք լեր—անիկ
կյանքով: Անձրեվը թրջեց մը—յուններին և լջ—իկներին: Մեր
առա—ին դասը հայերեն է, իսկ վեր—ինը՝ թվաբանություն:
Վող—ույն մեր սիրելի առա—նորդ ընկ. Ստալինին: Այս աղ—
—իկն ամբող— ուրը կարդում է: Արամի քրո— գնահատա—
կանները լավ և մի—ակ են: Գրքի մե— վոչինչ չպետք է
պահել: Մեծ դասամի—ոցին նախաճաշում ենք:

5) Գրում ենք ձ, արտասանում՝ ց:
116. Արտագրեցեք: Ընդգծեցեք ձ տառը, վոր արտասանվում է ց:

են ԻՆՁՆ Ե

Յես եմ մի վերմակ սաստիկ ընդարձակ, և՛ տաքացնում եմ, և՛ մրսեցնում, դերձակներին չեմ հարստացնում:

Հանելուկի լուծումը՝ այն սավան:

* ընդարձակ, դերձակ, դերձակութուն

117. Պատրաստեցեք այս բառացուցակը:

Բ բաղաձայնից հետո, յեթե լավում է ց, մեծ մասամբ գրվում է ձ:

ր ձ

աշխատավարձ	դերձակ
արձագանք	ընդարձակ
արձակուրդ	համարձակ
բարձր	Համբարձում
դարձյալ	հանդերձարան

118. (ստուգողական արտգրություն.) Արտագրեցեք և գծիկներով տեղը դրեք բաց թողած տառերը:

Դեր—ակ, Համբար—ումը դար—յալ բար—բաձայն կար—աց «Համար—ակ ո—աչու» հո—վածը:

Ըն—ար—ակ անտառում ձայնն ար—գանք է տալիս: Ձմեռալին ար—լակուր—ին դպրոցի հանդեր—արանը նորո—եցին:

6) Գրում ենք ձ, արտասանում՝ իս:

119. Արտագրեցեք: Շարադի լուծումը գրեցեք վորպես վերնագիր: Ընդգծեցեք ղ տառը, վորը կարդացվում է իս:

ՇԱՐԱԴ

Առաջին վանկս կերակրի մեջ ենք գործածում, լերկորո-

դը՝ փոքրիկ կրծող կենդանի լե, իսկ ամբողջ բառը տհաճ ձայն է:

* ամբողջ

Շարադի լուծումը՝ աղ — մուկ

120. Պատրաստեցեք այս բառացուցակը:

Բաղաձայնից առաջ, յեթե լավում է իս, մեծ մասամբ գրվում է ղ:		
աղբ	դեղձ	հաղթել
աղբյուր	կեղտ	չղջիկ
յեղբայր	ուղտ	վողջույն
աղջիկ	թուղթ	քաղցած
ամբողջ	խեղդել	քաղցր

121. Արտագրեցեք: Ընդգծեցեք ղ տառը, վորը կարդացվում է իս: Վողջույն ամբողջ աշխարհի մեր ավագ լեղբայրներին՝ պիտներներին: Աղջիկները քաղցր լերգերով գնացին ջրի: Ուղտը խեղդվեց աղբյուրի մոտ:

122. (ստուգողական արտգրություն.) Արտագրեցեք և գծիկներով տեղը դրեք բաց թողած տառերը:

Կուշտը քա — ցածին մանր կերդի: Հակոբը սիրում է դեղ — : Տետրակիդ շապկին թու — թ քաշլի, վոր չկե — տոտ — վի: Ու — տը քալում է, իսկ դե — ձանիկն ու չ — ջիկը թըռ — չում են:

7) Հ տառը ր տառից հետո չի արտասանվում:

123. Արտագրեցեք: Ընդգծեցեք հ տառը ր բաղաձայնից հետո: Շնորհակալութուն ընկ. Ստալինին մեր ուրախ և լեր — ջանիկ կյանքի համար:

Խորհուրդները մեզ տվեցին լավ ճանապարհներ: Կեցցեն պիտներները ամբողջ աշխարհում:

124. Պատճառներ այս բառացուցակը:

Հ տառը մի քանի բառերի մեջ է բաղաձայնից հետո մեծ մասամբ չի արտասանվում:

աշխարհ	խոնարհ	արհամարհել
ճանապարհ	խորհուրդ	շնորհակալություն

125. Արտագրեցեք: Ընդգծեցեք այն բառերը, վորոնց մեջ հ տառը չի արտասանվում:

ԳԻՇԵՐ

Խաղաղ գիշեր է,
գեղեցիկ ու զով,
աշխարհը նիրհում է
անուշ լերագով:
* աշխարհ

126. Արտագրեցեք այն բառը, վորի մեջ հ տառը չի արտասանվում:

ՃԱՆՃԸ

Խոնարհ ու հեզ մի հոգնած լեզ արորն ուսին, ճանճը պողին, մի իրիկուն գալիս եր տուն:
* խոնարհ

127. (ստուգողական արագրություն). Արտագրեցեք և գծիկների տեղը դրեք բաց բողած տառերը:

Փայլի անունն է դուրս լեկել, աղվեսն աշխար — ը քանդեց:

Խոնար — գլուխ է տալիս, պառկում է, լերը տուն է գալիս:

8) Հոգնակիի եր և ներ մասնիկներ

128. Լրացրեք այս սխալմանի բառերի հոգնակին և գրեցեք:

ՅԵԶԱԿԻ (մեկ) **ՀՈԳՆԱԿԻ (մեկից ավելի)**

հավ	հավեր
կով	
այծ	
սար	

Առարկան ունի յերկու թիվ՝ յեզակի և հոգնակի:
Յեզակին ցույց է տալիս մեկ առարկա, իսկ հոգնակին՝ մեկից ավելի նույն տեսակի առարկաներ:

129. Այս հոգնակից արտագրեցեք միայն հոգնակի բառերը և ընդգծեցեք հոգնակիի եր մասնիկը:

ԱՄՊԵՐ

Ամպեր են վազում բարձր սարերից, խիստ քամու ձեռից. փախչում, գնում են, կարծես խրտնում են ծարավ արտերից:

— Կացեք, ան ամպեր, ինչո՞ւ չեք փախչում, անձրեւ չեք թափում. մեր ծարավ արտերն որեւ համբելով ձեզ են սպասում:

130. Լրացրեք այս բաղմավանկ բառերի հոգնակին և գրեցեք:

ՅԵԶԱԿԻ

ՀՈԳՆԱԿԻ

հոկտեմբերիկ	հոկտեմբերիկներ
պիտեն	
մատիտ	
բանվոր	

Հոգնակի կազմելիս միավանկ բառերին ավելացնում ենք եր, իսկ բաղմավանկներին՝ ներ:

131. Լրացրեք ն-ով վերջացող բաղմավանկ բառերի հոգնակին և գրեցեք:

ՅԵԶԱԿԻ

ՀՈԳՆԱԿԻ

սեղան	սեղաններ
պահարան	
դործարան	
դասարան	

132. Արտագրեցեք հոգնակի բառերը և ընդգծեցեք հոգնակի ներ մասնիկը:

ԳԱԶԱՆԱՆՈՅՈՒՄ

— Վերադարձից ես գալիս, Արամ:

— Գազանանոցից: Ինչե՞ր ասես, վոր չտեսա. ի՞նչ գազաններ՝ առյուծներ, բորենիներ, աղվեսներ, ի՞նչ թռչուններ՝ թռթռակներ, սոխակներ, ջալլամներ, դեղձանիկներ, ի՞նչ սողուններ, տեսակ-տեսակ կապիկներ և ուրիշ շատ կենդանիներ:

* գազաններ, թռչուններ, սողուններ

Նոյ վերջացող բաղմամբանի բառերի հոգնակին գրվում է չերկու նոյ:

133. Արտագրեցեք վարժությունը՝ հոգնակի բառերը յեղակի դարձնելով:

Արագիլն ուտում է ձկներ, գորտեր, միջատներ, վորդեր, մկներ, մողեսներ և նույնիսկ թռչունավոր ոճեր:

134 Արտագրեցեք հոգնակը՝ յեղակի բառերը հոգնակի դարձնելով (գծիկների տեղը ավելացրեք հոգնակի մասնիկները):

ՁՄԵՌ

Ձմեռը հարձակվեց գազան — ի վրա: Ձյունով ծածկեց դաշտ — ն ու անտառ — ը, իրար յետեւից սառնամանիք — ուղարկեց: Բայց գազան — ը չվախեցան: Վոմանք տաք մուշտակ — ելին հագել, մյուս — ը մտել ելին իրենց խոր բն — ը:

9) Իկ, ուկ, ալ և ունի մասնիկներ

135. Լրացրեք և գրեցեք:

իկ	ալ	ուկ
ուլ — ուլիկ	գետ — գետակ	հորթ — հորթուկ
այծ —	տետր —	ձագ —

Բառերի վերջում դրվող իկ, ալ, ուկ մասնիկները գրվում են կ տառով:

136. Արտագրեցեք: Ընդգծեցեք իկ մասնիկներ ունեցող բառերը:

Կատվիկը կանչեց մկնիկին: Մկնիկը կատվիկից, կատվիկը շնիկից, շնիկը թռչնիկից, թռչնիկը տատիկից, տատիկը պապիկից, պապիկը շաղգամից, վոր քաշեցին, քաշքշեցին, շաղգամը հողից հանեցին:

137. Կարդացեք և բաց բողած բառերն ավելացրեք:

Հալն ածեց ձու, իսկ թիթեռնիկը՝	
Շունն ունի թաթեր, իսկ ճանճը՝	
Կատուն ունի բեխեր, իսկ թիթեռնիկը	

138. Գտեք այս հանելուկի լուծումը. նկարեցեք և նկարի տակ արտագրեցեք: Ընդգծեցեք ալ և իկ մասնիկները:

Յերկու ծայր, չերկու ողակ, իսկ մեջտեղը՝ բեվեռակ:
Սպիտակ տակառիկ՝ մեջը չերկու գույն խմելիք:
Հանելուկի լուծումները՝ մկրտ, ձու:

139. Արտագրեցեք և ընդգծեցեք իկ և ուկ մասնիկները:

Այ իմ ձագուկ, ալ իմ թռչնիկ, փափկամազիկ, լերկար վզիկ, չերկար վոտիկ, չերկար տոտիկ, բոլոր բարձրիկ, ձենդ քաղցրիկ:

140. Արտագրեցեք: Գծիկների տեղը ավելացրեք բաց թողած իկ մասնիկը:

ԿԱՔԱՎԻ ՅԵՐԳԸ

Քո թեվ փափուկ ու խառուտ —,
փոքր — կուռց, կարմիր տոտ —,
կարմիր կարմիր տոտ — ներով
կշորորաս ձուտ — ներով:
սիրուն —, սիրուն —,
նախշուն կաքավ —:

— Վերադարձից ես գալիս, Արամ:

— Գազանանոցից: Ինչե՞ր ասես, վոր չտեսա. ի՞նչ գազաններ՝ առյուծներ, բորենիներ, աղվեսներ, ի՞նչ թռչուններ՝ թռթակներ, սոխակներ, ջալլամներ, դեղձանիկներ, ի՞նչ սողուններ, տեսակ-տեսակ կապիկներ և ուրիշ շատ կենդանիներ:

* գազաններ, թռչուններ, սողուններ

Նո՛ւվ վերջացող բազմական բառերի հոգնակին գրվում է յերկու նո՛ւվ:

133. Արտագրեցե՛ք վարժությունը՝ հոգնակի բառերը յեզակի դարձնելով:

Արագիլն ուտում է ձկներ, գորտեր, միջատներ, վորդեր, մկներ, մողեսներ և նույնիսկ թռչնավոր ոձեր:

134 Արտագրեցե՛ք հոգվածը՝ յեզակի բառերը հոգնակի դարձնելով (գծիկների տեղը ավելացրե՛ք հոգնակի մասնիկները):

ՁՄԵՌ

Ձմեռը հարձակվեց գազան — ի վրա: Ձյունով ծածկեց դաշտ — ն ու անտառ — ը, իրար լետե՛վից սառնամանիք — ուղարկեց: Բայց գազան — ը չվախեցան: Վտմանք տաք մուշտակ — ելին հագել, մյուս — ը մտել ելին իրենց խոր բն — ը:

9) Իկ, ուկ, ալ և ունի մասնիկներ

135. Լրացրե՛ք և գրեցե՛ք:

իկ	ալ	ուկ
ուլ — ուլիկ	գետ — գետակ	հորթ — հորթուկ
այծ —	տետր —	ձագ —

Բառերի վերջում գրվող իկ, ալ, ուկ մասնիկները գրվում են կ տառով:

136. Արտագրեցե՛ք: Ընդգծեցե՛ք իկ մասնիկներ ունեցող բառերը:

Կատվիկը կանչեց մկնիկին: Մկնիկը կատվիկից, կատվիկը շնիկից, շնիկը թռռնիկից, թռռնիկը տատիկից, տատիկը պապիկից, պապիկը շաղգամից, վոր քաշեցին, քաշեցին, շաղգամը հողից հանեցին:

137. Կարդացե՛ք և բաց քողած բառերն ավելացրե՛ք:

Հավն ածեց ձու, իսկ թիթեռնիկը՝	
Շունն ունի թաթեր, իսկ ձանձը՝	
Կատուն ունի բեխեր, իսկ թիթեռնիկը	

138. Գտե՛ք այս հանելուկի լուծումը. նկարեցե՛ք և նկարի տակ արտագրեցե՛ք: Ընդգծեցե՛ք ալ և իկ մասնիկները:

Յերկու ծայր, յերկու ողակ, իսկ մեջտեղը՝ բեմեռակ:
Սպիտակ տակառիկ՝ մեջը յերկու գուն խմելիք:
Հանելուկի լուծումները՝ մկռս, ձու:

139. Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք իկ և ուկ մասնիկները:

Այ իմ ձագուկ, այ իմ թռչնիկ, փափկամազիկ, լերկար վզիկ, լերկար վոտիկ, լերկար տոտիկ, բոյգ բարձրիկ, ձենդ քաղցրիկ:

140. Արտագրեցե՛ք: Գծիկների տեղը ավելացրե՛ք բաց թողած իկ մասնիկը:

ԿԱՔԱՎԻ ՅԵՐԳԸ

Քո թե՛վ փափուկ ու խառուտ —,
փոքր — կտուց, կարմիր տոտ —,
կարմիր կարմիր տոտ — ներով
կշորորաս ձուտ — ներով:
սիրուն —, սիրուն —,
նախշուն կաքավ —:

141. Արտագրեցեք: Գծիկների տեղը ավելացրեք իկ և ուկ մասնակները:

ԲԱԴԻԿ

Բադ—, բադ—, իմ սիրուն—, ուր ես գնում կամաց-կամաց, ձագ—ներդ չորս կողմդ առած:

142. Հանելուկի լուծումը վորպես վերնագիր գրեցեք:
Արտագրեցեք և գծիկների տեղը դրեք բաց թողած իկ մասնակը:

Չորս վոտք ունիմ կարճ ու կոկ—,
գլուխ ունիմ ինչպես գորտ—,
մարդ տեսնելիս սիրտս ե դողում,
վոտք, գլուխս չի լերեվում:

Հանելուկի լուծումը՝ կրիա:

143. Լրացրեք և գրեցեք: Ընդգծեցեք ունի մասնակը:
բանվոր— բանվորունի գերասան—
աշակերտ— գերձակ—

144. Արտագրեցեք այբբենական կարգով:

Մաքրունի, Իսկուհի, Սրբունի, Արմենունի, Զարունի, Հայկունի, Վարդունի, Թադունի

145. Արտագրեցեք: Գծիկների տեղը ավելացրեք բաց թողած ունի մասնակը:

ՄԱՐՏԻ 8-ը

Մարտի ութը աշխատավոր—ների տոնն ե: Այդ որը պարգևատրվում են ուսման հարվածային աշակերտ—ները և ուսանող—ները, հարվածային ուսուցչու—ները, ստախանովական բանվոր—ները և կոլտտես—ները:

X. ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

146. Արտագրեցեք և ընդգծեցեք հարցական բառերը:

ԿԱՏԱԿ

— Ի՞նչ ես անում:
— Վոչինչ:

— Իսկ նա ի՞նչ ե անում:

— Ինձ ե ողնում:

Հարցական նշան (°)

Հարցական բառի վերջին ձայնավորի վրա հարցական նշան ե դրվում:

147. Կարդացեք հարցաթերթը:

Արտագրեցեք միայն հարցերը և պատասխանների տեղը գրեցեք ձեր անունը, ազգանունը, տարիքը և այլն:

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Անուն:— Վարդանուհ

Ազգանուն:— Հակոբյան

Քանի՞ տարեկան ես:— 9 տարեկան:

Հոկտեմբերի՞կ ես, թե՞ վոչ:— Այո:

Վո՞ր դասարանում ես:— Յերկրորդ դասարանում:

148. Արտագրեցեք հարցերը և ամեն մի հարցին պատասխանեցեք այն՝ կամ վո՞չ բառերով:

Պատասխանից առաջ գիծ դրեք և սկսեցեք մեծատառով:

Գերազանցի՞կ ես:

Հոկտեմբերի՞կ ես:

«Հոկտեմբերիկ» ստանում ես:

Նվագել գիտե՞ս:

Գրելուց առաջ ձեռներդ լվանում ես:

Որինակ՝ Նվագել գիտե՞ս:— Այո:

149. Կարդացեք հարցերը ձախ սյունակում և նրանց պատասխանները՝ աջ սյունակում:

Ինչպե՞ս եք կարգում հարցերը և ի՞նչպես՝ պատասխանները:

Հարցեր

1) Արամը հիվանդ ե:

2) Տաքություն ունի՞:

3) Նրան բժշկում ե

բժի՞շկը:

Պատասխաններ

1) Արամը հիվանդ ե:

2) Տաքություն ունի:

3) Նրան բժշկում ե

բժի՞շկը:

150. Արտագրեցեք հարցերը և ապա՝ գրեցեք պատասխանները նույն բառերով:

ԳՍՐՆԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Հարցեր	Պատասխաններ
1) Ձյունը հալվել է:	1)
2) Դուրսը տաք է:	2)
3) Թռչունները վերադարձել են:	3)

151. Այս պատասխանների համար գրեցեք միայն հարցերը՝ լրիվ կերպով:

Հարցեր	Պատասխաններ
1)	1) Դպրոց գնում եմ:
2)	2) Դասերից չեմ ուշանում:
3)	3) Դասերս լավ սովորում եմ:

Որինակ՝ Դպրոց գնում եմ:

152. Գրեցեք միայն լրիվ հարցերը:

1)	1) Լենինը ծնվել է 1870 թվին:
2)	2) Լենինը մեռել է 1924 թվին:

Որինակ՝ Յեֆրե է ծնվել Լենինը:

153. Արտագրեցեք հանելուկները:

Չմոռանա՞ք նախադասության վերջում վերջակետ դնել, իսկ հարցական բառերի վրա՝ հարցական նշան:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1) Ո՞վ չի հաջում, չի կծում, բայց տուն վոչ վոքի չի թողնում:

2) Ո՞վ է իր վրա իր տունը կրում:

Հանելուկների լուծումները՝ կրիա, կողպեֆ:

154. Տրված հարցերին լրիվ պատասխաններ գրեցե՞ք, վո՞ր ըստացվի փոքրիկ պատմվածք:

Նախադասությունն սկսեցե՞ք մեծատառով և նախադասության վերջում վերջակետ դրե՞ք:

ԳՍՐՈՒՆ

Ի՞նչ լեզանակ է գալիս ձմեռվանից հետո: Արե՞վը լերկա՞ր է մնում լեռնա՞քում: Ի՞նչպե՞ս է լինում ողը: Ի՞նչպե՞ս են լինում գիշերներն ու ցերեկները: Ի՞նչ է լինում ձյունը: Վ՞ճր թռչուններն են վերադառնում տաք լեռնա՞նքից: Ի՞նչով են ծածկվում դաշտերը: Ի՞նչ են անում կոլտնտեսականները դաշտում և բանջարանոցում:

(գարուն, ամառում է, լեռնա՞րում են, կա՞մանում, հալ-չում է, չվող թռչուններ, կանաչո՞վ, աշխատում են)

155. Արտագրեցե՞ք և ընդգծեցե՞ք բառերի ուժեղ արտասանվող վանկերը:

ԳՐՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մի պատառոտի՞ր ինձ:

Մի գրի՞ր թերթերի՞ս վրա:

Ինձ կազմա՞հան մի անի:

Միշտ զբաղվի՞ր ինձանով:

Շեքս (')

Բառի ուժեղ արտասանվող վանկի ձայնավորի վրա շեքս է դրվում:

156. Արտագրեցե՞ք:

Չմոռանա՞ք շեշտը և հարցական նշանը դնել:

ՀԱՆԵԼՈՒԿ

Են ի՞նչ բան է, իմ մանկիկ.

զուլդ լծափայտ ահանջին,

քթի վրա մի թամբիկ,

լերկու անիվ աչքերին:

Հանելուկի լուծումը՝ ակնոցներ:

157. Պատրաստեցեք հետևյալ պլակատները:
Դասերդ միշտ պատրաստիր: Լավ կարդա և գեղեցիկ գրիր:

Մաքուր պահիր շորերդ և գրենական պիտույքներդ:

158. Արտագրեցեք և ընդգծեցեք յերկար արտասանվող բառերը:

ԳՈՂ ԱՂՎԵՍԸ

Մին ել կանչեց տատս պառավ.
«Աման, հասե՛ք, տարա՛մ, կերա՛մ,
գլխիս ես ի՞նչ փորձանք բերա՛մ
անտեր աղվեսը՝ պոչը ծաղիկ»:

Բացականչական նշան (^)

Բառի յերկար արտասանվող վանկի ձախավորի վրա բացականչական նշան ե գրվում (ա՛յ, մայրի՛կ):

159. Արտագրեցե՛ք:

Զմուռանա՛ք բացականչական նշանը դնել:

ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

Զանգակը գնդաց՝ զը՛նգ, զը՛նգ:

Սուլիչը սուլեց՝ սւ սւ սւ:

Ծուխը բարձրացավ՝ փո՛ւհ, փո՛ւհ, փո՛ւհ:

Շողին դուրս պրծավ՝ ֆը՛շշ, ֆը՛շշ, ֆը՛շշ:

Անիմները պտտվեցին՝ չը՛խկ, չը՛խկ, չը՛խկ:

160. Արտագրեցե՛ք: Յերկար արտասանվող բառերի վրա բացականչական նշան դրե՛ք:

ՎԱԽԿՈՏԸ

Վայ, վայ, վախենում եմ:

Այ, այ, ցավում ե:

Մայրիկ, մայրիկ,

Շեշտը ('),

հարցական նշանը (^),

բացականչական նշանը (^)

առոգանության նշաններ են կոչվում:

161. Արտագրեցե՛ք:

Զմուռանա՛ք առոգանության նշաններ դնել:

ԳՍՐՆԱՆ ԱՌԱՎՈՏ

Ուտում առուն խոխոջում ե գըլգըլալեն անո՛ւշ, անո՛ւշ,
քամին բարակ շընկշընկում ե գըլգըլալեն անո՛ւշ, անո՛ւշ:

ԾԻՏՆ ՈՒ ԲԱԶՆՆ

Ծիտը ծառին ծըլվըլում ե՝ ծի՛վ, ծի՛վ, ծի՛վ...

Բազեն գլխին պըտըտվում ե՝ վա՛յ, վա՛յ, վա՛յ...

ՀԵՌԱՆՈՍԻ ՄՈՏ

— Կենտրոն... Կենտրոնն ե: — Այո, — լավեց խողովակի միջից:

Բացի առոգանության նշաններից կան նաև կեսառոգության հետեվյալ նշաններ՝

վերջակետ (:)

լենթամնա (-)

միջակետ (.)

չակերտ («»)

ստորակետ (,)

անշատման գիծ (—)

բուլթ (^)

կախման կետեր (...)

162. Արտագրեցե՛ք V տողից մինչեւ XII տողը և ձեր արտագրածը դերերով ճիշտ առոգանությամբ կարդացե՛ք:

ԱՐԶԱԳԱՆԻ

Փոքրիկ Արաաշեսը շվացնելով գնում եր ձորով: Հանկարծ լսեց, վոր մի ուրիշն ել ե շվացնում: Հենց իմացավ՝ ընկերն ե, կանգնեց և ձայն տվեց

— Վահան, դո՛ւ լես:

— Յէս...

— Մեր հորթն ուր գնաց, տեսա՞ր:

— Սա՛ր...

— Հանա՞ք ես անու՛մ, ի՞նչ ե:

— Չէ...

— Վա՛յ, եդ հո գելը կուտի:

— Ուտի՛...

Արտաշեսը լալով վազեց տուն, տեսա՞վ հորթն ել ե
տանը, վահանն ել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերկու խոսք

Եջ

3

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

I. Վերջակետը նախադասութեան վերջում	9
II. Նախադասութեան բաժանումը բառերի	11
III. Մեծատառը մարդկանց անունների սկզբում	13
IV. Բառերի բաժանումը վանկերի	14
V. Վանկերի բաժանումը հնչյունների	16
VI. Կրկնություն	17

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

I. Նախադասություն	21
II. Բառերի կապակցությունը նախադասության մեջ	23
III. Առարկա	25
IV. Առարկայի վորպիսությունը	27
V. Առարկայի գործողությունը	29
VI. Մեծատառն անունների սկզբում	30
VII. Վանկ և բառերի տողադարձ	35
VIII. Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, այբուբեն	38
IX. Ուղղագրական վարժություններ	44
X. Առոգանության նշանների գործածությունը	56



Տեխ. խմբագիր՝ Գ. Ջենյան
Սրբագրիչ՝ Ս. Շահրազյան
Քլավկետի կիազոր Վ. 1140

Տրված է արտադրության 9 հուլիսի 1936 թ.
Ստորագրված է տպելու 5 ոգոստոսի 1936 թ.

Հրատ. № 3785

Տիրաժ 3000

Պատվեր 890

Թղթի չափը 62X94

Տպագրական մամուլ 4

Մի մամուլի մեջ 40,000 նիշ

Պետհրատի տպարան, Յերեվան, ԻԻ Գնունի, № 4

ԳԻՆԸ 3 ՌՈՒԲ.

597

М. Гаспарян
**Элементарная грамматика
и
правописание
I и II классы**
Гиз ССР Армении Эривань, 1936

ՀՀ Ազգային գրադարան



NL0232883

C111

